

Հաստատում եմ՝
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության
Շուկայի և սպառողների շահերի պաշտպանության
պետական տեսչության պետ՝

Աշոտ Ղազարյան

**ՇՈՒԿԱՅԻ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ
ԿԱՆՈՆՆԵՐ**

Պետական տեսուչը մատուցում է ծառայություններ և իր գործունեությամբ պետք է
օժանդակի տնտեսվարողին շտկելու հայտնաբերված
անհամապատասխանությունները ինչպես նաև պաշտպանելու սպառողների
շահերը, մշտապես հիշելով, որ իր խնդիրը ոչ թե պատժամիջոցն է այլ հարցին լուծում
տալը:

1. Սույնով սահմանվում են տեսչության պետական տեսուչների (այսուհետ՝ տեսուչ)
էթիկայի կանոնները:

2. Տեսուչների էթիկայի կանոնները բարոյականության համընդհանուր սկզբունքների
վրա հիմնված, տեսուչների վարվելակերպի, վարքագծի և փոխհարաբերությունների
առանձնահատկությունները կարգավորող նորմեր են:

3. Տեսուչը պարտավոր է պահպանել էթիկայի հետևյալ կանոնները.

ա/ զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել ստուգվող
մարմնի աշխատանքները կամ վարկաբեկել և հեղինակագրվել նրան.

բ/ հարգել մարդու արժանապատվությունը, ղեկավարվել մարդասիրության, արդարության
և ազնվության սկզբունքների վրա հիմնված բարոյական նորմերով.

դ/ լինել անաչառ, անկողմնակալ, զուսպ և օրինակելի.

ե/ անհարկի չընդգծել իր պաշտոնական դիրքը.

զ/ իր բանավոր և գրավոր շփումներում բացառել կոպտության դրսևորումը.

է/ իր վարքով նպաստել հասարակության այն համոզմունքի և հավատի ձևավորմանը և
պահպանմանը, որ իր գործառույթները իրականացվում են անկողմնակալության,
ազնվության գաղափարի վրա.

ը/ խուսափել ցանկացած տեսակի հովանավորչությունից և ծառայության ընթացքում
օգտագործել միայն բարոյական միջոցներ՝ նպատակին հասնելու համար.

թ/ իր վարքով իրեն կախվածության մեջ չդնել որևէ անձից.

ժ/ չօգտագործել ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի
դարձած տեղեկատվությունը՝ իր անձնական շահերի համար.

ի/ պահպանել բարոյական նորմերով սահմանված էթիկայի այլ կանոններ:

4. Սույն էթիկայի կանոնների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը: